տակ ևս երկաթեայ դռներ կային զինուորաց երթևեկութեան համար։ Այս կամարը բռնած էր իր պարիսպներու շարունակութիւնով գիւղիս հիւսիսն։

Այս կամարի հարաւ արևմուտք, այժմեան գիւղի միջավայրը 5—6 տարի առաջ կը տեսնուէր մի աշտարակ «Խանըմի քօշք» անուամբ. Նաև սորա շուրջն գտնուած են ներկարարի կարասներ, ամբարներ և կրպակի հետքեր. շուկայն Խանըմի քօշքից մինչև երկաթեայ դռներու մօտ տարածուած էր։

Նաև այս քօշքի մօտ այվան (դահլիճ) մի կար, որ 6—700 մարդ կը պարունակէր, և դեռ 1880—85 թուականներուն կիսականգուն էր։ Նոյն աշտարակն հայ կաթոլիկք քանդեցին ու տեղը եկեղեցի շինեցին, որուն արդէն ականատես եղած եմ։

Այս աշտարակի տեղն գտնուած է մի բևեռագիր արձանագրութիւն, մի հատ ևս Թուլխ Մանուկից բերուած էր, որոց մէկն անյայտացած էր, միւսն Թ. գալէի վարժարանի որմի մէջ հիւսել տուած եմ։

Հազար ափսոս որ այսպիսի թանկագին հնութիւններ անհետանալու վերայ են։

ՁԵՌԱԳԻՐ ՏՕՆԱՊԱՏՃԱՌԻ ՄԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

«Արդ . . . ի վանս Յովանու ընդ Հովաննեաւ Սրբոյ Կարապետիս ի խնդրոյ առն ումեմն կոչեցելոյ Անդրէաս Այր Աստուածասէր և գովելի ձեռամբ Աբրահամու աշխատութեամբ և ջանիւ մեծաւ ի պանդխտութեան ժամանակիս։ Արդ յերես անկեալ հայցեմ յամենեցունց յիշել ի մաքրամատոյց և գերաստիճան յաղաւթս ձեր զստացող սորին և զգծող։ Տէր Յիսուս զյիշեցեալսս և զյիշեցողդ յիշեսցէ յիւրում գալստեանն և արժանի արասցէ անծերանալի մանկութեան և անհնանալի